

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ՄՏԵՓԱՆՈՍ ԳԱՇՏԵՑՈՒ ՀՐՈՒՅՑ-ԲԱՆԱՎԵՄԵՐԻ ԳԱՏՄԱՄԵՐԱԿՈՒՅՑԱՅԻՆ ԱՐԺԵՔԸ

17—18-րդ դդ. Աշխարհի բանաստեղծ և հրապարակախոս Ստեփանոս Դաշտեցի Արտիկ աշխատություններից մեկում՝ դիմելով հայ հոգևորականներին, ասում է, թե ինքը առևտրական բազմամյա գործունեության քերումով՝ լինելով աշխարհի ամենատարբեր երկրներում, հնարավորություն է ունեցել շփվելու այլազան սովորույթների, բարքերի, կրոնների և լեզուների տեր մարդկանց հետ, գրուցելու, իսկ հաճախ նաև բանավիճելու գաղութացած հարցերի շուրջ և ամեն անգամ, երբ հարկ է եղել պաշտպանելու քրիստոնեական հավատը «գիարդ և իցէ ըստ կարոյ և ըստ որբանութեան իւոյ՝ ոչ կասեցա երբէք թէ քանի և թէ գրով աշխատիլ վասն ճշմարտութեան ի վերայ բոլորակի գնդի աշխարհիս, ոչ թե միայն ի մէջ ազգաց քրիստոնէից ջատագով եղաք ճշմարտութեանն, այլ ընդ այլ ազգիսն ևս առաւել քան գառաւել՝ թէ ընդ հեթանոսս՝ թէ ընդ պարսիկսն, թէ ընդ արաբացիս և ընդ իսմայիլացիս՝ ի յամենայնում տեղիս ուր և պատահեցաքն թէ՛ ի Հնդկիս, թէ ի տանն Յունաց՝ ոչ երկնչելով ժամէք և ոչ բնաւ և անդառնալի և անփոփոխ յուսով ակնկալեալ յայնմ որ սիրողն է ճշմարտութեանց՝: Անշուտ, Դաշտեցու ինքնակենսագրական այս բարձրաճումն տեղեկությունները առաջին հայացքից կարող են թողնել ինքնակենսագրական ժանրին բնորոշ ինքնամեծարման ու ինքնագովաբանման տպավորություն: Բայց դա միայն առաջին հայացքից: Իրականում պարզվում է, որ Դաշտեցին արել է ավելին, քան կարողացել է ներկայացնել վերջ բերված հատվածում: Նման եզրակացության մեզ հանգեցրել է Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց միաբանության ձեռագրատան թիվ 346 ձեռագրի ուսումնասիրությունը¹: Այն արտագրվել է 1725 թ. Հունիսի 55 օրում: Գրիչն է «յով անուամբ Ասլան, զի է որդի Յակոբեան և ի յերկրէն Պարսից ի մեծն Հայաստանէ և ծնընդեամբ Դափանայ և հանգիստ բնակարան Թարսիլիզեցի» (էջ 255):

Խնդրո առարկա ձեռագիրն ամբողջությամբ բաղկացած է Դաշտեցու չափածո և արձակ ստեղծագործություններից, որոնց մի մասը մեզ ծանոթ է Մաշտոցի անվ. մատենադարանի ձեռագրերից, իսկ մյուսները՝ միայն այս ձեռագրից: Խոսքը վերաբերում է 137—255 էջերում գրառված թվով յոթ գրույց-բանավեճերին. ողբոք Դաշտեցին ունեցել է վաճառակաւնի իր աստանդական գործունեության ընթացքում: Որպես գրուցակիցներ կամ բանավիճողներ հանդես են գալիս մի կողմից, ինքը՝ Դաշտեցին, իսկ մյուս կողմից՝ գերազանցապես պարսիկ-մահմեդական վաճառականներ, շեյխեր, փիլիսոփաներ, բանաստեղծներ, մահմեդականացած հայեր և այլն: Բանավեճի առարկա են հանդիսացել փիլիսոփայական, կրոնական, բարոյագիտական, գեղագիտական և այլ կարգի հարցեր, որոնցից շատերն այսօր ևս չեն կորցրել իրենց այժմեականությունն ու կարևորությունը:

Դաշտեցու գրույց-բանավեճերը, մեր խորին համոզմամբ, արժեքավոր են ոչ միայն իրենց արժարժած հարցերով ու դրանց տրված պատասխաններով, այլև, որ սակի կարեւոր է, հնարավորություն են տալիս ճանաչելու 17—18-րդ դդ. սահմանագծում պարսից իրականության հասարակական-քաղաքական ու գաղափարական-մշակութային մթնոլորտը, լուսավարական գաղափարները և այլն: Օրինակ, պարզվում է, որ վաճառականությունը պատմականորեն կարևոր դեր է խաղացել ոչ միայն տարբեր երկրների ու ժողովուրդների միջև տնտեսական, քաղաքական, գիտական ու մշակութային կապերի հաստատման ու ամրապնդման, այլև տարբեր կրոնների ու դավանանքների տեր մարդկանց միջև փոխըմբռնման, փոխհանդուրժողության և համագործակցության գաղափարական-հոգեբանական մթնոլորտ ստեղծելու գործում: Այդ տեսակետից բացատրիկ դեր են խաղացել այսպես կոչված առևտրական տներն ու քարվանսարանները, որոնք եղել են ոչ միայն

¹ Ստեփանոս Դաշտեցի, Մաղախ փշրանաց, Մաշտոցի անվ. մատենադարան, ձեռ. թիվ 8111, էջ 215բ:

² Օգտվելով պատեմ առիթից, խորին շնորհակալությունս եմ հայտնում նույն միաբանության Լուսարարապետ Դավիթ արք. Սահակյանին նման կարեկիություն ստեղծելու համար:

տնտեսակաճ գործարքներ կնքելու, հոգնեցուցիչ ճանապարհորդություններից հետո կար-
ճատն դադար առնելու վայրեր, այլև գիտաՎեպկության յուրատեսակ օջախներ, որտեղ
հաճեցիպելով աշխարհի չորս կողմերից եկած տարբեր կրոնների, գիտելիքների, լեզուների.
մշակույթների, բարքերի ու սովորույթների տեր մարդիկ, հաճախ կազմակերպել են գրա-
կան-երաժշտական երեկույթներ ու մրցույթներ, գիտական, կրոնական, փիլիսոփայական,
քարոյազիտական ու գեղազիտական զանազան հարցերի շուրջ բանավեճեր, քննարկել
ժամանակի մարդկային միտքը հուզող խնդիրներ, տվել կամ ստացել պատասխաններ, ու-
րոնք այլ պայմաններում ու այլ հանգամանքներում նույնիսկ անհնար էր երևակայել: 24'
որ դրանք յուրահատուկ «չեզոք գոտիներ» էին, որտեղ ամեն ոք իրեն զգում էր անհամե-
մատ ավելի ազատ, քան իր հայրենի երկրում ու սեփական տանը: Չմոռանանք նաև, որ
Ռիշյալ ժամանակաշրջանում, եթե երրորդական առանձին երկրներում (Հոլանդիա, Անգլիա,
Ֆրանսիա և այլն), որտեղ դեռ նոր միայն տիրապետող էր դառնում խղճի ու մտքի ազա-
տության մկզրուները, թեկուզ «աղոններում» հնարավոր էր ազատորեն քննարկել մտան
կարգի հարցեր, ապա դա բացառված էր ասիական և աֆրիկյան երկրներում, ուր անա-
սան էր միջնադարակաճությունը՝ բռնակազությունն ու կրոնական մոլեռանդությունը:

Գրեթե բոլոր բանավեճերի հիմնական նյութը քրիստոնեական և մահմեդական կրոն-
ների փոխհարաբերության, դրանց ծեսերի ու սովորույթների, քարոյական ու գեղազիտա-
կան մկզրուների, մեկը մյուսի նկատմամբ ունեցած առավելությունների ու թերություն-
ների հարցն է: Այդ տեսակետից հատկանշական է առաջին բանավեճը, որ վերնագրված է՝
«Առարկությունք ի պարսից ոմանց և պատասխանատրությունք ի մէջ ի պատահիլն մեր
ի բազում տեղիս, մանաւանդ ի թիվս Փրկչին հազար եօթն հարիւր և եօթն, յորժամ էաք
ի Բանդար Սուրաթ անուանեալ քաղաքում ի Հնդիկս ընդ ոմանս փիլիսոփայս անուանիս,
զորոց անուանքն երկարութիւնն՝ է ստորագրիլ» (էջ 187—202):

Առաջին իսկ հարց ու պատասխանից զգալով, որ շարունակելը կարող է խիստ վտան-
գավոր լինել, Դաշտեցին ասում է՝ ընդդիմախոսներս խնդրեցի «կամ ոչ առարկել ընդդէմ
մեր ձեզ ազնուամենծաց երջանկացդ զվիճաբանութիւնս հաւատոյ և կամ մի՛ երթէք ցաւ-
նույ կամ դաւել զմեզ զոր ոչ երթէք մեղաք ձեզ: Բանգի դիտատրութիւն երկոցունցս ոչ
այլ ինչ է, եթէ ոչ իմանալ զնորագոյնս ինչ, վասն զի ոչ դուք կարէք թողուլ զբոլոր սրտէ
ընդդեմեալ և ի ճնա սեւեռեալ հաւատն ձեր, և ոչ ես կարեմ տաճել և բոլորովմք հետևիլ
հաւատին ձերոյ, ի բաց մերկանալով ի սիրոյն Քրիստոսի Փրկչին մերոյ» (էջ 189): Ընդ-
դիմախոսները նույնպէս քաջ հասկանալով, որ նման բանավեճերով անհնար է տարհա-
մոզել մեկին, որ հավատասիրելի հնարավոր է ոչ թե կամավոր ընտրության, այլ բռնու-
թյան և հարկադրանքի ճանապարհով, միաձայն տալիս են հետևյալ խորիմաստ պատաս-
խանը. «Մեք ևս լաւ գիտեմք զալոցանէ, զի ոչ մեք զքեզ առ մեզ դարձուցանել կարեմք
կաճաւ և ոչ դու զմեզ ի յօրինացն մերոց ամենեկին, սակայն բանականին և գրծ միշտ
արծարծել զգիտութիւնն, վասն որոյ դիտատրութիւն մեր ոչ է զոմանս դաւելոյ սակս, այլ
միայն իմաստասիրելոյ յաղագս և դիտատրութիւն մեր: Ուրեմն կարեմք բացասել յատրա-
սութեանց միմեանց: Նա՛՛ ևս ոչ է կանոն իմաստասիրաց կամ փիլիսոփայից ցաւնույ
իրերաց և կամ պահել զոխս ի սակս վիճաբանութեանցն, որ հայիցի միշտ ի յիմաստա-
սիրելն» (նույն տեղում):

Կարիք կա՛ ասելու, որ տասնութերորդ դարակազին, եթե օտար կամ «չեզոք» երկ-
րում քրիստոնյա և մահմեդական-պարսիկ վաճառականները կարող էին բանավիճել «զնո-
րագոյնս ինչ» իմանալու կամ «իմաստասիրելոյ» նպատակով, ըստ այդմ պատշաճ չէր «ի-
մաստասիրաց կամ փիլիսոփայից ցաւնույ իրերաց և կամ պահել զոխս ի սակս վիճաբա-
նութեանցն», ապա գրեթե անհնար էր նույնը անել Իրանում, որտեղ արգելված էր մահ-
մեդական կրոնի քննադատությունն ու բանական-փիլիսոփայական զննատությունը: Այ-
սուհանդերձ նույնաբնույթ բանավեճեր Դաշտեցին ունեցել է նաև Իրանում: Դրանցից ա-
ռանձնապէս արժեքավոր է շարքի 6-րդ բանավեճը (էջ 231—238), որ տեղի է ունեցել
Սեֆյան Իրանի մայրաքաղաք Սպահանում՝ «ի խանութիւն Միրզաբադի ումեմն մեծի վա-
ճառականին»: Ուշագրավ է այն, որ նախ «Միրզաբադի ումեմն» մեծ վաճառականը եղել է
Դաշտեցու «աղան», եղբորորդ, ի պաշտպանություն մահմեդական կրոնի Դաշտեցու հետ
բանավիճում են ոչ թե պարսիկները, այլ մահմեդականացած հայերը, որոնցից մեկը նախ-
կին վարդապետ Հովհաննես Չուլֆայեցին է՝

Անկախ այն թանից, թե ովքեր էին Դաշտեցու հետ բանավիճողները՝ պարսիկներ թե
մահմեդականացած հայեր, բոլոր դեպքերում այս կարգի բանավեճերը վկայում են այն մտտին,

* Ի դեպ՝ մեկ սղլ աղբորդից իմանում ենք, որ այս շրջանում պարսից իրականության
մեջ տարածված էր նույնպէս ըր քրիստոնեության դեմ պայքարել մահմեդականացած քրիստոն-
յաների միջոցով: Ատուգապէս գիտենք, որ Պարսից Սուլթանն Հուսէյն շահը անձամբ համ-
քիպել ու գրուցել է Չուլֆայի հայ հոգևորականների հետ և ներկա եղել այս նույն Հովհան-

որ 17—18-րդ դարերի տաճարաբանական պարսից վաճառականությունը լինելով աշխարհի տարբեր երկրներում, շփվելով այլ կրոնների ու դավանանքների տեր ժողովուրդների հետ, տևեալական շահը վեր դասելով ամեն ինչից, դրսևորում էր կրոնական հանդուրժողականություն, հանդես գալիս մտքի ու խղճի ազատության ակզբունքի պաշտպանությամբ:

Նկատենք նաև, որ խելոյո առարկա գրույց-քանակների հեղինակը սովորական վաճառական չէր, այլ ծնվել էր գրական-քանաստեղծական փառլուն տվյալներով, իր կյանքի գիտակցական ուղին սկսել էր որպես հոգևորական, բայց կես ճանապարհին կտրուկ շրջադարձ կատարելով, ընտրել էր առևտրականի դժվարին ու վտանգաշատ գործունեությունը: Ու քանի որ նա կույս էր ծառայելու Ապոլլոնին և ոչ թե մամուռային, երբեք չի լքել նրան, այլ օգտագործելով վաճառականական կյանքի ընձենած սող հնարավորությունները, ստեղծել է մատենագրական քաղաքական հարուստ ծառայություն, որի զգալի մասը մատենագետների կողմից գնահատվում է որպես հայ գեղարվեստական գրականության անուրանալի ձեռքբերում²: Դաշտեցու գրույց-քանակներից շատերը նույնպես գեղարվեստական գողորդի ստեղծագործություններ են, որոնց հեղինակը դրսևորում է հասարակական կյանքի երևույթները դիտելու, դրանք գեղարվեստորեն վերարտադրելու փառլուն հմտություններ, մասնավոր փաստերից լայն ընդհանրացումներ կատարելու կարողություն, պատկերավոր ոճ ու նուրբ երգիչական:

Վերջապես, Դաշտեցու գրույց-քանակներում երբևէն հանդիպում են հազվագյուտ այնպիսի փաստեր ու տեղեկություններ, որոնք գաղիս են էսպես հարստացնելու մեր պատկերացումները հայ մշակույթի պատմության մասին: Օրինակ, ելքե միջև վերջերս հայտնի էր, որ Դաշտեցին բացի գրող-քանաստեղծ լինելուց նաև է նաև քաղաքական հմուտ երաժիշտ³, ապա «Հարցումն ինչ վասն զինոյ» գրույց-քանակներից, որը խելոյո առարկա քանակներից 5-րդն է (էջ 221—230), խիստում ներ, որ ունեցել է նաև գեղանկարչական քաղաքակցի ընդունակություններ ու շնչաած իր կյանքի անթարեմնապատ պայմաններին, հմտացել է դիմանկարչության սուսարեզում: Դրանով իսկ 17—18-րդ դդ. հայ, մասնավորապես ջողաճայ գեղանկարչության պատմությունը հարստանում է մեկ անունով ևս, որը, կարծում ենք, անկարելու չէ հայ սերվեստի պատմության ուսումնասիրության տեսակետից:

Այսպիսով, Ստեփանոս Դաշտեցու գրույց-քանակները կարևոր սկզբնաղբյուր են հայ մշակույթի պատմության ուսումնասիրության և հաստատում են, որ 17—18-րդ դդ. առևտրական տներն ու քարվանսարանները եղել են մի-մի «տաղոն», որտեղ քննարկվել են ժամանակի հասարակական միտքը հուզող ամենատարբեր հարցեր ու խելոյոներ, դրանով իսկ մեծապես նարատելի մարդկային մտածողության գարգացմանը:

Ի հաստատումն վերը շարադրվածի, ստորև ներկայացնում ենք Դաշտեցու 5-րդ և 6-րդ գրույց-քանակները, որոնցից առաջինը կույվում է «Հարցումն ինչ վասն զինոյ», իսկ երկրորդը ըստ էության վերնագիր չունի, ուստի պայմանականորեն անվանում ենք «Ստեփանոս Դաշտեցու քանակները Հովհաննես Զուլֆայեցու հետ»:

Հուսով ենք, որ դրանք կարծանաճան ինչպես հայ մշակույթի, այնպես և հայ-իրանական մշակույթային կապերի պատմությանը գրադրող մասնագետների ուշադրությանը:

Բնագրերը տարագր թյան ենք հանձնում առանց էական փոփոխությունների: Միայն բացել ենք կարճագրությունները, շղատառով նշել անկնհաստ պիսակները, շուկել կետադրությունը:

Հ Ղ. ՄԻՐԶՈՑԱՆ

նես Զուլֆայեցու և Հովհաննես (Մրրուզ) Զուլֆայեցու հրատարակային քանակներին: Այդ մեսին խաչատուր Զուլֆայեցին գրում է. «Եւ յես սագում ինչ խօսից ընդ վարդապետանս մեր, զայ առաւ որպոյզ զարեպայն Յոհանն' (որոյ անունն ըստ պարսկական դեմին' կոչիր Օնգիումին և կամ Մահմաւտ Ալի հէլ) և Վատոյց գերկրպազայթին ի վերայ երեսաց իրոց: Եւ արքայն առաւ սկսանի գնա գովել ընդ նահարարս իր թէ՛ աչախի և այնպիսի գիտութեանք իմաստնացեալ է ի գիրս մեր, և յոյժ կորովամիտ ի հանձարս և ի գիտութիւնս գրոց: Եւ սոպա հարցանէ ցնա թէ՛ դաս առնո՛ւս: Եւ նա աւէ՛ յանձնայն աւոր: Արքայն աւէ՛ ընդ առաւ երբէք իսկ վիճարանն՝ թէ ոչ: Եւ նա աւէ՛ յանձնայն աւոր: Աւէ արքայն՝ այժմ առաջի իմ արկ զվիճարանութիւնս, զի և նս տեւից: Եւ արքայն Յօւէն ակն արկեալ առ Յօհաննէւ վարդապետն՝ որ քացագոյն քան զանձնեւան կայր. աւէ դրքա ի քաց փայցն, և դու մատիր յառաջ, և խօսեաւ ընդ նիս» (Խաչատուր սերեղաց Զուլֆայեցի, Պատմութիւն Պարսից, Վարդաշապատ, 1905, էջ 168):

² Տե՛ս Լ. Մանուկյան, Ուշ միջնադարի հայ քանաստեղծությունը (16—17-րդ դարեր), Եր., 1975, Ա. Մանուկյան, Հայ միջնադարյան հանգուկներ (5—18-րդ դդ.), Եր., 1980, Ս. Սիմոնյան, Նորահայր առարկաց մը՝ Ստեփանոս Դաշտեցի, Պեյրուք, 1981 և այլն:

³ Տե՛ս Հ. Միրզոջան, Դաշտեցու գրական ծառայության գնահատության շուրջ, «Նորք», 1988, № 11, էջ 134:

Նմանապէս և բազմիցս եղև հարցանիլ, զմէնչ, թէ Քրիստոսն ևս ըմպէր թերևս զգինի: Եւ ետ ձեզ հրաման ըմպելոյ, ուստի և ըմպէ՞ք անխտիր թէ ո՛չ: Եւ իբր պատասխանէաք, թէ ոչ թէ միայն Քրիստոսն ըմպէր, այլև նոյն, մարտիրոսացի, Մատթէոս, Մարգարէքն ամենայն ըմպէին և ետուն ըմպել այլոց, որպէս և ընթեռնանի և ի գիրս Կտակարանացն, զորս ունին ազգ եբրայեցոցն, զորս Քովրաթ անուանէք դուք: Նա՛ ևս տերն մեր Քրիստոս ի հարսանիս Կանա գալիլեացոցն ի պակասիլ գինոյն հրամայեաց լնուլ զկճեայսն ջրով և իբրև հրամայեաց տալ տաճարակետին, եգիտ զջուրն գինի եղեալ պատուականագոյն քան զոր ըմպէին, որպէս և գրի ի յաւետարանչացն սրբոց: Ուրեմն, ո՛ր զտանէր զգինին, պարտ էր իսկոյն փոխարկել ի ջուր և ոչ թէ անդրադարձապէս զջուրս փոխարկել ի գինի, ուրեմն և այլն: Եւ իբր լսեն զայսպիսեաց բանից, խնուն առ ժամայն զլսելիս իրեանց և թօպայ, թօպայ և եթ ասելով կամին սուտ հանել զբովանդակ գրեանս Աստուածաշունչ, այսինքն՝ Հին ն նոր Կտակարանս և այլն: Եւ ի լսելն մեր ի նոցանէ զայսպիսի զզայրացողական և հիացողակ[ան՞] բանս յայնժամն պարտ իսկ էր մեզ ուրեմն ի ձեռն պատճառաց ցուցանել գինին է ի բերոյ որթոյ և է մաքուր, սուրբ և պատուականագոյն քան զայլ ըմպելիս ի պէտս կենդանական զօրութեան մարդոյն և յայն շափաւորն: Ուստի և բազմիցս լինէր ի կողմանէ մերմէ զհարցումն ինչ ի նոցունց այսպէս: «Միրելի՛ք իմ, կամի՞մ հարցանել ի ձէնչ թէ յորմէ՞ գոյանայ գինին, զի իցէ պիղծ և միշտ պիղծ, նա՛ և զշափաւորն և զանշափն, զմի կաթիլն և զմի կարասն զուգակշիռ և զուգահաւասար լինի՞լ պիղծ: Եթէ ոչ ի բերոյ որթոյ և ի խաղողոյ զոր ամենայն ազգ ուտեն ի նմանէ, կազմեն զբազում ուտելիսս պէսպիսիս, զորոց և երկարանամք ի թուելն: Իսկ եթէ իրաւի է այս, ուրեմն գինին ըստ գոյացութեան իւրոյ է սուրբ և մաքուր և ոչ է պիղծ, որպէս կարծեքդ: Թէպէտ ըստ քանակութեան ընդունողացն կարեն և երբեմն լինիլ վնասակարք, մինչ զի տան զթմրութիւն երևակայութեան զգայականի մասինն, որք են դործիք բանականին, որ թարց պարզութեան երեւակայութեանն մնա բանականն ի ներգործութենէն իւրմէ, յորմէ յառաջագայի մեզ ինչ և ոչ թէ գինին ինքնին է պիղծ գոյացութենէ, որպէս և ասացաք: Յայսմ դիտաւորութեամբ նա՛ և սոյն մտօք գրեաց Մատթէոս սակս խտրութեան կերակրոց ոմանց անսուրբ կոչելով զնոսա, վասն զի կերպիւ իմն վնասակար ծանեաւ վասն կերակրոց մարդկան: Եւ այս կամ այն նկատելով ի բնութիւնս նոցունց, որպիսի է առիժն բնութեամբ պատառող, կատուն գողացող, շունն բարկացող, աղուեսն խաբեբայ, արջն ծոյլ, գայլն յափշտակող, էշն անզգայ, խոզն որկրամուլ և բղջախոհ: Եւ այլ սոյնպիսիք կենդանիք, որք բնութեամբ են վատթարք, զորոց երկարանամք ի թուել: Իբր զի մի[ս՞] ուտելովն զայսպիսիս զկենդանիսն հետևիցին և բարուց նոցին և տայցեն կերպիւ իմն ընդդիմանալ բնութեան զգայականի մասինն մարդոյն: Եւ կամ թէ նկատելով ի դժնդակութիւն մարմնոյ նոցին զհամոց և զվնասակ[ար]ութեանցն, զորս կարէինն թերևս տալ զցաւ իմն և տկարութիւնս անդամոց, որպէսիք էն միս ազաւուցն, արագուց, բազայից և աքաղաղից և կամ զմիս գայլոց, արջուց, աղուեսուց, առիժուց, քաօրից օձից և այլոց դժնդակ գազանացն ի կերակուր: Եւ ոչ թէ արդարև պիղծք իցեն այսոքիկ քան զայլ մնացեալ կենդանիսն, որք են ամենեքեանն ի միոյ զանկուածոյ և ի շորորդէ տարրէ, մինչ զի կարասցեն տալ և պղծել զմարդն: Յասացելոցս հետևի, թէ սոյնպէս և սոյն դիտաւորութեամբն գրեցան և ի գիրս ձեր վասն գինոյն իբր աւելորդացն, սակս որ է արտաքոյ կոպարին, որ կերպիւ իմն ընդ-

դիմանայ պարզութեանն երևակայութեանն, որմէ պատահի պարապիլ բանականութեանն և լինի ներհակ հրամանին Աստուծոյ, որ է մեղանշումն ընդդէմ Աստուծոյ և հակառակ բնութեան իւրոյ ինքնեանն և ոչ թէ գինին ինքն իցէ պիղծ, որպէս և կարծէքն: Եւ հետևապէս ոչ թէ միայն գինին, որ ի կիր առնուցու ոք արտաքոյ կոպարին, միայնակ իցէ պիղծ, այլ և ամենայն կերակուրք և ըմպելիք, զորս հանդգնաբար և մոլեխնաբար առնուցումք ի կիր և սաստիկ տենչանօք յգլխանայցեմք նոքօք, ուստի ծնանիցին ի նոցունց վաշվաշ տոսմունք մինչ ի դուռն բղշախոհութեան, որ է վնաս առ ի ապաստամբումն ի բանականութենէ մասինն: Եւ մինչ զի ի յաճախ աւելորդացն յայնցանէ ծնանի ցաւ իմն, որով կարասցէ զհիւանդութիւնս տալ զգայականի մարմնոյն և մահացուցանել զմարդն, որ է կամաւ մարդասպանութիւն: Վասն զի յայնժամ բարեկամաբար սպանանէ զբարեկամն: Կարեն ասիլ աւելորդքն այնք լինիլ թերևս պիղծք, վասն զի վնասն մարդոյն կերպիլ իմիք: Սակայն ոչ թէ արդարև իցեն պիղծք և կամ արգելեալք ի բանական և ի գրաւորական օրինաց: Վասն զի ամենայն կերակուրք պատրաստեցան յԱստուածայնուստ ի պէտս մարդկան և ամենայն կենդանեաց և են յառաջ եղեալք ի պահպանումն կենդանական զօրութեանն՝ ընտրելով զօգտակարն և հետևիլ նոցա և խոտել զվնասակարսն և փախելիլ ի նոցանէ: Նա՛ ևս գոյն բազումք կերակուրք, որք են խոտելիք և փախելիք և ի շափաւորացն նոցունց, սակայն սակաւք և մասնաւորքն ի նոցանէ են օգտակարք և ընդունելիք, մանաւանդ ի հարկաւորութեանում ամանակում, որպէս են դեղորայք ոմանք կամ աֆիօնն, քուքնարն, բանգն և նմանք սոցին, որք ի հարկաւորութեանումն են ընդունելիք և հետազօտելիք, որք մանաւանդապէս օգտին ի սոցանէ հիւանդք հազոտք, յորովայնալուծք և դժուարամա[ր]սք ի կերակուրս, որք ի պէտս առողջութեան առնուցուն ի կիր և ոչ թէ առաւել քան զկոպարն, որպէս և է տեսանել ի թրիաքիսն, ի քուքնարիսն և ի գինէմոլան, որք ցայգ դեգերինն ի նոսա ի բաց մոռանալով զամենայն զխոկմունս և պաշտամունս աստուածայինս և ևս և զհոգունակութիւնս ընտանեաց և կեցութեանց նոցին, նա՛ և գործառնութիւնս համայնս, զորս հրամայեաց Աստուած գործել զերկիր և պահել: Այլ արդ զի՛նչ արդեօք իցէ թրիաքն, բանգն կամ քուքնարն, որ տայ գերել զանհամար անծինս և զ[ր՞]յաւել ընդ իշխանութեամբ, յորմէ յառաջագային ի նոցունց այնքան մեղք մինչ զի ասիլ կարասցին և ի սոցանէ, թէ են պիղծք և ոչ յառաջ եկեալք ի գեղեցիկ շուշանաց և ի բուսոց գեղեցկաց, որք են մաքուրք, սուրբք և ըստ գոյացութեանցն իւրեանց բարետեսիլք: Ասելի է ուրեմն, թէ մինչ առնու ոք ի սոցանէ զշափաւորն իբրև զ[ս՞]յակղանի ինչ սակս պահպանելոյ զկենդանական զօրութիւնն իւր, որպէս ի վեր անդր ասացաւ, յայնժամն են սուրբք և բարիք թէ՛ թրիաքն, թէ՛ գինին և թէ այլքն: Իսկ յորժամ ոք յանդգնաբար յարիցի ի նոսա և մոլեխնաբար առնուցու ի կիր սակս որկորս պարարելոյ աղագաւ, յայնժամն է շար և ընդդէմ կամացն Աստուծոյ և իւրեան ինքեանն և կարէ ևս ասիլ թերևս՝ և՛ պիղծ, և՛ խոտելի: Վասն զի այսպիսիք մոլութիւնք բազում անգամ տեսանին ի դրաւելս նոցունց, այսինքն ի թրիաքիս, ի քուքնարիս և ի բանգիսն, մանաւանդ թէ և ի գինէմոլան, որք ի յանկոպար կիրառութենէ սոցունց տեսանին նոքայ թրմրեալք և ցամաքեալք և ի բոլոր զգայականութենէ մասանցն մրիպեալք, վասն զի հատուկ է ավելորդաց և ստէպ խնդրողացն սոցունց տալ խշկել զմարմինն, բառնալ զգոյնն, համրացուցանել զբարբառ խօսիցն, կորացուցանել զուղորդ հասակն և կորուսանել զպարզութիւն: Երևակայութեանն և առնել ի կերպարանս կապկան: Զոր և արդարև յայնժամն է մեղ մահացուօրէն և կորութիւն մտաց, վատնումն և կորուստ պատուականութեան մասինն մար-

դոյն, այսինքն՝ երևակայութեան, որում և կարեն ասիլ պիղծք և պղծագոյնք պիղծք: Ըստ որում և ասելի է և վասն գինոյն, որ է ի բերոյ ողկուզոյ և ի շքնաղատեսիլ և բարեհամ խաղողոյ ի պարտեզաց աղնաշնչից և խոնաու-
թենէ ականակիտ և բարեկաթուած, շուրց ի յանձրևաց և ի ցօղոյ երկնից, զոր եթէ ոք զշափաւորն առնուցու ի կիր իբր առ ի տալ յինքեան առողջու-
թիւն կենդանական զօրութեանն և ի պահպանումն անհատութեանն իւրոյ, յայնժամն է սուրբ և մաքուր, պատուականագոյն քան զամենայն ըմպելիս: Վասն զի հատուկ է շափաւոր գինոյն ընձեռել զարիութիւն իմն և զօրութիւն ի յամենայն առաքինութիւնս, թէ ի հոգևորս և թէ ի մարմնաւորս, զորոց և մի ըստ միոչէ ճառելն լինի երկարութիւն բանից, մանաւանդ թէ շնորհէ զբեր-
կրութիւն և զխնդութիւն իմն, մինչ զի բազմիցս տա՛ ներել պարտաւորաց և մեղանշօղացն, ի յինք սիրել զընկերն, համոզել զբազումս ի սիրելութիւն, վերահիշել զբարեբարութիւնս ալլոց, ստէպ մոռանալ զառօրեայ զտրտմու-
թիւնս, ի բաց մերժել զյուսահատութիւնս և զերկիւղս սնտոսիս, զուարթանալ, ի պատերազմունս արիանալ և ի պահպանութիւնս տանց, բերդորելից և ապա-
րանաց առիւծաբար, զոր ոչ ոք ի կերակրոց շափաւորաց և կամ ի վեր անդր ճառեցելոց մրդոցն առբերել կարէ այնքան շահաւէտութեանցն, զորս դոյնն ինչ ծանուցաք: Վասն զ[ի՛] թու[ի՛]՝ մեք ևս լաւ գիտեմք և ոչ եմք չա-
տազովք գինեբրուացն ամենեկմք, մանաւանդ թէ ամօթ մեծ և մեղ մահացօ-
րէն է ի միջի մերում առնուլ աւելի քան զշափաւորն, իսկ շափաւոր ասելն մեր է մինչ զի ամենեկմք ո՛չ տալ երևոցել ի յինքն, թէ յառաջ քան զառնուն էի զգաստագոյն և խոհեմագոյն, իսկ եթէ կերպիւ իմն թուիցի յինքեան, թէ յամ-
րութիւնս այս ի պատճառէ գինոյն առընկալեալ եղև յինէն, յայնժամն է առա-
ւել քան զշափն, վասն զի արար Աստուած զամենայն բարութիւնս վասն մար-
դոյն, իսկ մարդն արար վասն իւրոյ ինքեան, զի հնազանդեսցի հրամանին Աստուծոյ: Եւ յորժամ մարդն կորուսանէ զերևակայութիւնն իւր թէ ի ձեռն գինոյ և թէ ի ձեռն ալլոց մրրոց, յայնժամն տայ արգելանել զորժեաց բա-
նականին, որ է պատուականագոյն մասն մարդոյն, զորոց ասացաքն, թէ ամենայն ինչ վասն մարդոյն արար, այսինքն՝ վասն բանական զօրութեան մարդոյն: Արդարև յայնժամն է ապստամբութիւն ի յԱրարչն իւրմէ և հա-
ւասարել գինքն անբան անասնոց և զընկալեալն ի նմանէ վատնել և կորու-
սանել, վասն զի եթող զկոպար և զշափաւորն և անասնաբար մխեցաւ ի կո-
րուստ անձին և կենդանական զօրութեան իւրոյ ինքեանն առ ի վնասել և բազմիցս սպանանել զինքն: Յասացելոցս հետևի, ուրեմն, թէ գինին ըստ ինքեան ոչ է պիղծ և ոչ ոք կերպիւ, եթէ զշափաւորն առնանիցի ի կիր: Իսկ յորժամ ոք առնուցունն մոլեգնաբար, յայնժամն է մեղ մեծ և արգելե[ա]լ ի գրոց մերոց: Ուրեմն որպէս և աւելորդք ամենից կերակրոց և ըմպելեաց արգելեալք եղէն ի բանական և ի գրաւորական օրինացն, նոյնպէս և գինոյն աւելորդն է ևս արգելեալ յամենայն տեղիս և ոչ թէ գինին իցէ ի ալլոց տար-
րերաց և իցէ պիղծ, իսկ ալլք կերակուրքն իցեն ի շորորդ տարբրիցն և են սուրբք: Ապա՛, ուրեմն, թէ նախահարքն և թէ Քրիստոս առնուին զշափաւորն և զբաւականն, ի բաց հրաժարելով յավելորդացն թէ՛ ի գինոյն, թէ՛ ի կե-
րակրոց և թէ ի մրգաց գեղեցկագունից և կամ յըմպելոյ զջուրս աւելորդս որ-
պէս և պատմի ի գիրս Կտակարանաց ընդարձակապէս:

Եւ յաւուր միում եղև և բան ինչ ի տան Շիխ անուանեալ մեծի օլօմայի և Ֆիլիզօֆայի և սակս իրողութեանս, այսինքն գինոյն: Եւ սկսանիլն մեր ի զրուցատրութիւն եղև այսպէս: Սկսաւ Շիխն գանկատօրէն ասել ցիս, թէ,

* Ձեռագրում գրված է՝ գթու, օրը, կարծում եմք, պետք է կարդալ՝ «գի թուի»:

խոջա՛յ, դու քանիցս անգամ ուխտեցեր ինձ գալ և ուսուցանել երբեմն զնկարումն ծաղկանց և վարդորէից և ոչ երբէք զկերպ ծառկի և եթ կամեցար ցուցանել մեզ ամենեկին: Եւ իմ պատասխանեալ ասացի, թէ գիտէ վեհանձնութիւն քոյ, թէ որպիսի դնիմ միայնակ ի ստոր և ծանու բռնանց և արդ մերձեցաւ եղանակ բարասաթին, այսինքն. անձրևոց: Եւ պարապոյ լինիլն մեր տամ Աստուծով զկերպ ծաղկանցն ուսանիլ, մանաւանդ, թէ՛ յաւուր մի ո[ր]-պ[էս]՝ ի՛ պարապոյ լինիլ տեսնող ցուցանել կամիմ ևս սքանչելագոյն արուվեստս, վասն զի ի մէջ երկուց ժամուց նկարմանն ի մէնջ տեսանես զզուգանման պատկերի քոյին վսեմութեանն նկարեալ ի վերայ դաստառակի իմիք, զոր ի տեսանելն ամենից մարդկանց հիանան ընդ կատարեալ համանմանութեան պատկերին քոյ, զոր ես բաղձամ նկարել և միշտ պահել ընդիս ի սէր քոյ: Յայնժամ պատասխանեալ, ասաց Շէյխն, թէ ես զնկարումն ծաղկանցն և եթ կամիմ ուսանիլ և ոչ զնկարումն պատկերաց կենդանեաց, մանաւանդ թէ մարդոյ ուրուք և այլն: Պատասխանեալ ասացի, թէ է՛ր աղագաւ պարտի լինիլ մեղք, ցուցանել մաղթեմ: Ասաց շէյխն, թէ վասն զի ի սմանէ յառաջ գան կռապաշտութիւնք, վասն որոյ և արգելեաց մարգարէն մեր բանին Աստուծոց: Որպէս և տեսանի և արգ[ել]ումն գինւոյ ի մարգարէէն մերմէ: Վասն զի մինչ ծանեաւ հազրաթն, թէ ի սմանէ յառաջ գան շփոթմունք և աղմուկք և մարդասպանութիւնք, վասն որոյ և պիղծ գոլ հրամայեաց և մեծաւ հրամանաւ արգելեաց ամենեկիմ որ ըմբել: Յայնժամն պատասխանեալ ասաց, թէ իսկ եթէ մարգարէն բանին Աստուծոյ ետ արգելել զպատկերահանութիւնն, ուրեմն է՛ր աղագաւ հրամայէր նոյն Աստուածն Մօսէսի առնել զպատկերս մանաւանդ թէ ձուլածոյս ի ոսկւոյ ըստ պատկերի Սրովբէից և տարածել ի քառանկիւնս տապանակին վկայութեան, ունելով զթեսս իւրեանց կից առ կից միմեանց, որպէս և ի յԱստուածաշունչն գիրք պատմէ նոյն Մօսէսն: Իսկ արդ՝ եթէ հրամայեաց Աստուած Մօսէսի, ուրեմն ոչ արգելու ձեռամբ մարգարէի ուրուք: Թերևս արգելու Աստուած զկռապաշտութիւնն (և եհար զբազում կռապաշտս մեծաւ հարուածովք) և ոչ պատկերահանութիւնն: Վասն զի նկարելն զպատկերս կամ տեսանելն զնոսա ո՛չ արգելանի Աստուծոյ, եթէ ոչ պաշտել և երկիրպագանելն զնոսա ի տեղի յԱստուծոյ: Բաւական է, ուրեմն, զի մեք յամենայնէ անձնէ և յամենայնէ զօրութենէ մտաց ծանիցոք զմի միայն բարձրեալն և Արարիչն զոլ Աստուած ճշմարիտ և ոչ այլ ոք, յայնժամն, եթէ զհազարիցս նկատիցեմք զպատկերս և կամ տեսանիցեմք հանապազօր, ո՛չ ոք կերպիւ բերէ զվնաս ո՛չ հոգւոյ և ոչ մարմնոյ, որովհետև իմանամք, թէ են ձեռագործք մեր և են ապականացոք և ի ձեռն որակաց հնարաւորութիւնք և անզօրք:

Սմին յաղագս պատասխանեալ ասաց Շէյխն, թէ զի թէպէտ մեք ոչ ունիմք ի գիրս մերս հրամայելն Մօսէսի առ ի ձուլել Սրովբէս ի յոսկւոյ և դնել ի վերայ տապանակի ուխտին, սակայն որպէս ասեսն, թէ գոյ դրեալ ի Թովբիթն Մօսէսի, կարելի է լինիլ, սակայն բանն, զոր ասացեր, թէ մեք հաւաստի գիտեմք, թէ պատկերք են ապականացոք և ոչ Աստուածք, արդարև ասեսն, վասնզի ես և դու ճանաչեմք իսկապէս, թէ սոքայ ոչ են Աստուած: Սակայն ի բազում տեղիս կարին գտանիլ և բազումք տգետք մինչ զի տեսանելն անկարծ զպատկերս սքանչելիս հիանան, ապշին և սկսանին երկրպագել և ի տեղի Աստուծոյ պաշտել զնոսա, որպէս և արդէն իսկ է տեսանել ի հնդու անուանեալ ազգս: Եւ այսպէս պատկերահանն լինի առիթ կռապաշտութեան, ուրեմն է մեղք արուեստ պատկերահանութեանն: Նմանապէս և

* Ձեռագրում գրված է՝ ուպ, թվում է, պետք է կարդալ «որպէս»:

ասելի է և վասն գինւոյն, վասնզի թէպետ և գիտեմք, զի գինին է ի մաքուր և ի բարեհամ պտղոց, այսինքն՝ ի խաղողոց, սակայն որովհետև ծնանի ի յարբեցութենէ գինոյն աղմուկ, կոխ և բազումս անգամ ևս՝ մարդասպանութիւնս, վասն որոյ և արգել մարգարէն մեր և զգինին, զի ոմանք, որք ոչ բաւականանան զչափաւորան ի արբեցութենէ նոցունց պատահեսցի աղմուկ ինչ և մարդաստանութիւն, ուրեմն և այլն:

Պատասխանեցաք առ պատուելի Շէյխն, թէ եթէ մարգարէն ձեր այսպես նորք հայեցողութեամբ ետ արգելուլ և ամենեկմբ ի բաց բառնալ յաշխարհէ զպատճառս կռապաշտութեան, որ պատկերահանութիւնն և զպատճառս շփոթից և մարդասպանութեանն, որ է գինին, զարմանամ, թէ է՞ր աղագաւ ուրեմն ոչ ետ արգելուլ մանաւանդագոյն պատճառն կռապաշտութեան և մարդասպանութեանն, որք են կանայք, թերևս շքնաղատեսիլք: Մանաւանդ, թէ ինքն առաւելապէս հրաւիրեաց զհետևողս իւրս առնուլ զկանայս, որքան և կարող են, թէպետ նքահիւք զչորս միայն և ոչ աւելի: Հետևապէս և ինքն ևս սիրէր զկանայս առնլով ի յիւր կնութիւն՝ թէ՛ նքահիւք և թէ՛ գնուածիւք ոչ սակաւք: Որք սոքայ ի տեղիս իւրեանց են ամենեկին առիթք և պատճառք աղմկի և խռովութեան, շփոթի և մարդասպանութեան: Վասն զի յսկզբանէ աշխարհի մինչև ցայսօր ո՛չ ոք աղմուկ, պատերազմ, մարդասպանութիւն և կռապաշտութիւնն եղև ի վերայ երկրի այնքան շատ, որքան և եղև ի սքստճառ կանանց: Ասեմ, թէ մինչդեռ մի՛ միայն կին գոյր ի վերայ երկրի և բոլոր աշխարհի, մատնեաց զայր իւր և զբովանդակ զծնունդս իւր ի ձեռն մահու: Ո՛ւր թողցուք մեք զըրհեղեղն, զկոտորածն, որ սկսանի Դինայի՝ դստեր Յակոբայ, զկուրութիւն Սամսօնի, զմեղանշումն Դաւթի սակս Բերասբէի և զպատիժն, որ ի ձեռանէն Աստուծոյ ի սատակել զտուն նորա, և զգլխատումն Յօհաննու Սկրտշի՝ որդւոյ Զաքարիայ, նա՛ և քան զչափն աւելի արեան հեղութեանց ի մէջ թագաւորաց, իշխանաց, զորոց զպատմութեանց ի ճառելն լինի ձանձրութիւն քոյին պատուականութեանն: Մանաւանդ, թէ զորոց և տէսաք ի ժամանակի մերում աշօք մերով ոչ սակաւս սպանութիւնք և աղմուկք, որ պատահեցան մի միայն ի պատճառս կանանց՝ թարց պատկերահանութեան և թարց պատճառի գինւոյ կամ արբեցութեան իմիք, որպէս և կարէ մակացութիւն ձեր և ենթադատել զճշմարտութենէ ասացելոցս: Յասացելոցս հետևի, թէ եթէ մարգարէն ձեր կամեցաւ զպատճառս կռապաշտութեան և մարդասպանութեան բառնալ տակաւին, հիանամ, թէ զիա՞րդ ոչ կամեցաւ մեկուսացուցանել թերևս զինքն միայն ի մանաւանդագոյն պատճառէ մարդասպանութեանն, որք էին կանայք, թէպէտ և կարէր տալ հետևողացն իւրոց զհրաման առնուլ սակս հարկաւորութեան թերևս երկուս առ ի հաճել զկամս նոցունց բաւականանալ երկոքումք և ոչ տալ կուտել ի տունս իւրեանց զգործիս սատակչականս յամենայն ուրէք և յամենայն տեղիս, որք են կանայք, ուրեմն և այլն: Եւ կամ թէ եթէ կամէր բառնալ զպատճառս մարդասպանութեան, ուրեմն զինչ առաւելագոյն կարծիք մարդասպանութեան, եթէ ոչ սուսերք և զէնք, հատուկ և դանակք, թիւրք և զըշահատուք համանգամայն և շինօղք և վարդապետք նոցա, որք են պատճառք ասացելոցն անօթից, որովք լինին մարդասպանութիւնք: Յասացելոցս հետևի, թէ թէպէտ պատճառք սուսերացն են շինօղքն և պատճառք սպանմանն սուսերքն, ըստ պարզ միտառման, որպէս և բազումք կարծեցին լինիլ այսպէս: Սակայն ըստ նորք հայեցողութեան տեսանի, թէ ո՛չ կազմօղք սուսերացն են պատճառք մարդասպանութեան և ոչ սուսերքն: Այլ միայն այրն, որ ազատ ընտրութեամբն կամի սպանանել զոք: Վասն զի դարբինն ոչ կազմէ զհատուն սասկ մարդասպանութեան, այլ վասն հատանելոյ զշալուն, զդեղձ, զմեղրոպոպ, զսեխ և կամ

զայլ մրգունս, իսկ եթէ ոմն ամբարիշտ զշարեալ հարցէ նովմբ սուսերան զոք, զինչ մեղս ունիլ կարծէ պատուելիդ իմ, դարբինն և կամ սուսերն, մի թէ հատանէ սուրն առանց ուրուք ձգելոյ, ասեմք, թէ ամենկիմբ ոչ: Իսկ եթէ այսպէս է, զորոց և ասացաքն, ուրեմն ոչ պարտիմք իմանալ թէ պատկերահանութիւնն է մեղք, զի լինի երբեմն և առիթ կուսպաշտութեան և կամ զգինին վարկանիլ պիղծ, զ[ի՞] երբեմն լինի պատճառ մարդասպանութեան, ուրեմն և այլն: Եւ դարձեալ ըստ դիտաւորութեան մարգարէին ձերոյ, եթէ պարսաւելի է պատկերահանութիւնն, վասն զի լինի առիթ կուսպաշտութեան: Եւ նմանապէս անգոսնելի իցէ զինին, վասն զի լինի երբեմն պատճառ մարդասպանութեան: Ասելի է ուրեմն, թէ առաւելապէս պարսաւելի պարտի լինի[ւ՞] դարբինն, որ կազմէ զսուսերս, մանաւանդ թէ Աստուած, որ ստեղծեաց զնիւթ սուսերացն, այսինքն՝ զերկաթն և կամ զայլ նիւթս մարդասպանութեանն, վասն զի, եթէ Աստուած ոչ էր ստեղծեալ զերկաթն, ոչ կարէր դարբինն կազմել զսուսերս, զգէնս, զթօփս և զթուանկս և զայլ գործիք պատերազմ[մ]ացն, որովք լինին մարդասպանութիւնքն: Հետեապէս, եթէ Աստուած ոչ էր գոյացուցեալ զխաղողն, ոչ կարէր մարդն զուգել զգինին: Նմանապէս, եթէ Աստուած ոչ էր յառաջածեալ զերանգս գունոցն և կամ շնորհեալ մարդոյն զշնորհս պատկերահանութեանն, ոչ կարէր մարդն նկարել զպատկերն:

Ուրեմն մանաւանդագոյն պատճառ մարդասպանութեանն թէ ի կողմանէ սուսերաց և զինւոյն կամ թէ կուսպաշտութեանն, որով կարծէք լինիլ պատճառ պատկերահանութեանն, ոչ այլ ոք է, եթէ ոչ Աստուած. և այսպէս կարծելով լինի մեծ մոլորումն և կուրութիւնն մտաց: Վասն զի թէ Աստուածն և թէ դարբինն և կամ զինին ինքն և կամ սուսերքն և հետեապէս պատկերահանն կամ թէ պատկերքն ոչ են ամենկին պատճառ մարդասպանութեանն և կամ կուսպաշտութեանն, եթէ ոչ այնոքիլ, որք ի բաց մերկանան զբանականութիւնն և փոխարկին ի կերպարանս անբան կենդանեաց, սպանանելով և պատահելով զհամանմանս իւրեանց, հետեապէս և թողլով զԱրարիչն իւրեանց, սկսանին երկրպագանել արարածոց՝ թէ պատկերաց և թէ աստեղաց և այլոց կենդանեաց: Ուրեմն և բաւականասցի:

【ՍՅՓԱՆՈՍ ԻԱՇՏԵՑՈՒ ԲԱՆԱՎԵՃԸ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՉՈՒԼՅԱՅԵՑՈՒ ՀԵՏ】

Հարցանէր և երբեմն ոմն տաճկացեալ վարդապետ, կոչեցեալն Յօհաննէս Զուֆայեցի և յորջոջեալ անուամբ Մահմատալիբէկ ի յԱսպահան քաղաքի ի խանութիւն Միրզաթաղի ումեմն մեծի վաճառականի իմոյս աղայի պարսկի թելադրութեամբ և ումեմն պարսկացիւոյ խօշոյս անուամբ քալանթարի, որ երբեմն քրիստոնեայ գլով Աւէտ, իշխէր ամենափարթամ քրիստոսապահ գեօղաքաղաքին Զուղայոյ, որ ի պարսից Մահմատ Հուսէյն Բեկ ընկալաւ զանուանակոչութիւն: Եւ ի յայսպիսոյ թելադրութենէս համարձակեալ տաճկացեալ վարդապետին զրգոի ի վիճաբանութիւն ընդդէմ մեր ի մէջ բազմութեան պարսիցն, որք էին գումարեալք ի զրուցատրութիւն ընդ ասացելոյ Միրզաթաղի կոչեցելոյ աղային իմոյ ոչ սակաւք:

Թէպէտ և մեր նկատելով զդատարկաբանութեանց զպտուղ և ի միոյ կողմանէ և զաստիճանէ պարոնութեանն Միրզաթաղոյն և զսպասաւորութենէ մերոյս համեստութեան, զբազումս ջանացաք կերպիւ իմն ճողոպրիլ թերևս: Սակայն խնդրմանէ ուրացող քալանթարին, զոր Մահմատ Հուսէյն Բեկ ընկալաւ զանուանակոչութիւն ի պարսից, եղև առարկութիւն ինչ ի կողմանէ տաճկացեալ վարդապետին ի մէջ բազմութեան տաճկացն, յորոց և մանա-

անդադոյն առարկութեանց նորին էր այս, թե՛ գրէ Մատթէոս ավետարանիչն ի գլուխն 23 երրորդ և ի համարն 33 ասելով, թէ՛ ծննունդք իժից զհարդ փախնուցուք ի դատաստանէ՛ գեհննոյն, վասն այդորիկ ես առաքեմ առ ձեզ մարգարէս, դպիրս և իմաստունս և այլն: Ուրեմն դուք ընդէր ո՛չ խոնարհիք ի հրաման Աւետարանին ձերոյ և մարգարէիս յայսմիկ, որ խոստացաւ առաքել, ուստի և առաքեաց, որ է մարգարէս մեր, ուրեմն և այլն:

1. Յայնժամն ստիպեալ մեր ի պատասխանատրութիւն, ուստի և սկսաք հարցմանականօրէն զպատասխանիս ասելով. Ո՞վ երբեմն վարդապետ հայոց, թերևս և հմտացեալ քերթողաբանութեամբ և աշակերտեալդ ի վասն նորոյս Զուղայոյ, ո՞վ ասէրն, թէ՛ Ծս առաքեմ առ ձեզ մարգարէս, թէ՛պէտ զյոզնակին առնուս ի տեղի եզակի անուանն: Պատասխանեաց տաճկացեալ վարդապետն, թէ՛ Քրիստոսն ձեր, զոր տեղի Աստուծոյ պաշտէք:

Յայնժամն շեշտ պատասխանեցաք, թէ՛ ուրեմն Քրիստոսն մեր զորս ասացեր, թէ՛ ի տեղի Աստուծոյ պաշտէք, է հրամանատու և առաքիչ և կարծեցեալ մարգարէն քոյ է ի Քրիստոսէն մերմէ՛ առաքեցեալ և հրամանակատար: Ուրեմն ըստ կարծեցեալ մեկնութեանն քոյ ոչ ոք խելագար կարէ թողուլ զառաքիչն և ծառայել առաքեցելոյն, վասն զի ոչ ոք առաքեցեալ կարէ գոլ պատուականագոյն քան զառաքիչն իւր: Եւ այս եզրակացութիւնս ի ձեռն բազում պատճառաց տուաք հաւանեցուցանել, յորոց մի ըստ միոջէ՛ գրելն լինի ձանձրութիւն ընթերձողացդ եղբարց:

2. Երկրորդ կերպիւ ասացաք, թէ՛ կանոն և սահման է ի մէջ առաքիչն և առաքեցելոյն, ուստի և հարկաւորապէս պարտ է առաքեցելոյն, զի անպրոպ համաձայնիցի առաքիչն իւրոյ: Իսկ ուրանօր և գտանիցի զբացձայնութիւն ինչ պատգամաց կամ բանիցն, յայնժամն աւերի սահման համաձայնութեանն, վասն զի յայնժամն առաքեցեալն երեւի ապստամբ գոլ ի յառաքէն իւրմէ՛ հարկաւորապէս:

Պատասխանեալ ասաց տաճկացեալ վարդապետն, թէ՛ Խ՛ւ իւիք բացաձայնեցաւ թերևս առաքեցեալ մարգարէս մեր ի բանից առաքիչն իւրոյ: Ետու զպատասխանի, թէ՛ Բազում և բազում իւիք, զոր եթէ՛ կամեցուք մանրամասնաբար ճառել մի ըստ միոջէ՛, լինի՛ ձանձրութիւն պատուելեացս, որք բամեալք են, սակայն համառօտեցուք զմինն ի հարիւրոցն, թէ՛պէտ որ բովանդակ գիրք մարգարէին ձերոյ է ընդդէմ Աւետարանին Քրիստոսի, մինչ զի ոչ ոք իւիք համեմատի և ոչ ըրպաչափ բանիւ և եթ: Վասն զի Քրիստոսն սկսանի նախ յինքնէ՛ զսպել զինքն ի փառաց և ի մեծութեանց աշխարհիս, շրջիլ աղաքատօրէն բոկոտամբ, ունելով զոթեան իւր ի բլուրս, ի յանապատքս՝ ոչ ունելով զտեղի, ուր դիցէ՛ զգլուխ իւր միշտ պարապեալ ի պաշտօնս և ի գործս աստուածայինս՝ զփախս առեալ ի հրէիցն, զի մի բռնադատեալ կացուցանեն զնա՛ թագաւոր, որպէս և պատմի յԱւետարանին, որպէս և քաջ տեղեակ ես: Հետեապէս պահելով զանարատութիւն, զամբողջութիւն և զմաքրութիւն կուսութեանն իւրոյ՝ ի բաց մերկանալով իսպառ ի զուգաւորութենէ, մանաւանդ թէ՛ և ի ծնողաց, եղբարց և յազգականցն ամենեցունց: Ամենայնի ներօղ, ամենայնի տևօղ և ամենայնի տանօղ՝ թէ՛ ի յըմբռնիլն, թէ՛ ի յապտակիլն, թէ՛ ի մերկանալան, ձաղիլն և փոխարեն այնքանից բարեաց և սքանչելագործութեանցն զնկատումն ձեռաց և առաջի դատաւորաց ածիլն, մինչև ի խաչ դատապարտիլն, թէ՛ որպիսի հանդարտութեամբ և որպիսի համբերութեամբ տարաւ արդարև ի հրեշտակաց ևս է հիանալի և սքանչանալի բան: Իսկ հակառակն սորին տեսանի կենցաղաւարութիւն մարգարէին ձերոյ: Նախ փարումն նորա զմեծութեամբք աշխարհիս մինչ զի ի ձեռն անշափ արեան հեղութեան և մեծի ջանի հասոյց զինքն ի յաս-

տիճան թագաւորութեան և ի գրաստ մարգարեութեան և ստացաւ զանհամար զարս և հրամայեաց ասպատակել զտունս, զընտանիս և զստացուածս, եթէ ոք ոչ խոստովանեցի զինքն մարգարէ Աստուածոյ, թողից ասել զբազմակնութեանց և ի սաստիկ բորբոքմանէ վավաշ տառփանաց և յաճախ զուգաւորութեանց նորին, մինչ զի առհասարակք հնազանդեալդ նորին համարձակ պարծիք ի յանքատակ և անհամեմատ կարողութենէ նորին առ մպաշրաթն, այսինքն զուգաւորութիւնն: Ուրեմն որպիսի՞ համաձայնութիւն եղև ի մէջ առաքչին, որ է ըստ մեկնութեանն քոյ Քրիստոսն մեր, ի մէջ առաքեցելոյն Քրիստոսի, որ է մարգարէն ձեր: Նմանապէս և Քրիստոսն է հետևողացն իւրոց և առաքելոցն սրբոց և առ յապայն եղելոց քրիստոնէից հետևիլ և վարուց նորին՝ մերկանալ յաշխարհէ, ո՛չ ստանալ զոսկի, զարծաթ և մի պղինձ, ո՛չ սիրել զկին, զորդի, զքոյր և զմայր, ի բաց հրածարիլ զառօրեա ստացուածոցն և համարձակ քարոզել զԱւետարանն, ո՛չ երկնչիլ յայնցանէ, որք սպանեն զմարմին և յետ այնորիկ ոչ կարեն առնել և ոչինչ և զբազումս այլս հրամանս երկնայինս, հոգևորս, հրեշտակակենցաղ մաքուրս, սուրբս սիրէ բորբոքս մանաւանդ թէ աստուածայինս: Իսկ հակառակն սոցին ամենեցուն տեսանի սահման և օրինադրութիւն մարգարէին ձերոյ, զորոց և մանրամասնօրէն բացերևոցելն մեր լինի յանդգնութիւն և վստահութիւն առաջի գերապատուելեաց տեսարցն իմոց և այլն: Ուրեմն որպիսի՞ համաձայնութիւն համարիս գու ի միջի Քրիստոսի, որ է առաքիչն և ի մէջ մարգարէին ձերոյ, զորմէ անուանես առաքիցեալն: Իսկ եթէ ոչ համաձայնեցեալ եղև առաքիչն իւրոյ հարկաւորապէս և պատահեցաւ անդ և զհետևութիւնն, որպէս և ասացաք, այսինքն կամ առաքեալս այս եղև բացաձայն և ապստամբեալ ի յառաքչէն իւրմէ և կամ սա՛ ոչ է առաքեալն, զորմէ ասացերն, թէ Քրիստոսն խոստացաւ առաքել, ուրեմն և այլն:

3. Երրորդ կերպիւ ասացաք, թէ ո՛վ Մահմատալիբեկ, երբեմնի վարդապետ Յօհան, զայդ վկայութիւնդ զորս ջանիւ մեծաւ գտար ի յԱւետարանին Քրիստոսի սակս հաստատելոյ մարգարէին քոյոյ կարծեցելոյ, կամիմ հարցանել զայս միայն և եթ տուր պատասխանին և եզերեսցի զդատարկաբանութիւնս մեր: Տացուք թերևս, թէ մարգարէն է այդ, զոր Քրիստոսն խոստանայ առաքել: Այլ արդ՝ մարգարէն, զորս Քրիստոսն խոստացաւ առաքել, հրամայէ այսպէս. Ահաւասիկ ես առաքեմ առ ձեզ զմարգարէս, դպիրս և իմաստունս, թէպէտ, որք նշանակեն զբազում անձինս և ոչ միայն զոմն այն անհատ, արդ հարցանեմ, թէ այս մարգարէս, զոր Քրիստոսն խոստանայ առաքել՝ առ ի սպանանի՞լն առաքէ, թէ առ ի սպանանելն: Իսկ եթէ սպանանեալ եղև մարգարէն ձեր թարց երկբայութեանն հաւատացուք և մեք, թէ արդարև մարգարէիցն առաքեցելոց և սա ոմն էր ի նոցանէ, Վասն զի հրամայէ Քրիստոսն, թէ հահաւասիկ ես առաքեմ առ ձեզ մարգարէս, դպիրս և իմաստունս և ի նոցանէ ասպանանիցէք և ի խաչ հանիցէք. և ի նոցանէ տանջիցէք ի ժողովուրդս ձեր և հալածիցէք քաղաքէ ի քաղաք և այլն: Արդ տեսանի, թէ Քրիստոսն առաքէ զմարգարէսն իւր առ ի սպանանիլ, ի խաչ հանիլ, տանջիլ և շարշարիլ, հալածիլ և մեռանիլ. արդ զի՞նչ ասիս երբեմն վարդապետ հայոց, մարգարէն ձեր կրեա՞ց զայստսիկ ի խաչել և սպանանեցա՞ւ, թէ կոտորեաց զբազումս, հալածեաց զանհամարս և եսպան զհոլովս, ինքն մեռաւ քնական մահուամբ. տուր զիրաւունս և բաւականասցի մեզ երկոցունցս:

Եւ իբր ետես Մահմատ Հուսէյն Բնկ քալանթարն տաճկացեալ, զի ոչ կարաց ստորոգել մարգարէութիւնն նորին բանին Քրիստոսի, յայնժամն տաճկերէն ասաց առ ուրացօղ վարդապետն, թէ ունէիր զվկայութիւն ինչ

վասն լուացմանն, զորս մարգարէն կանոնեաց, այսինքն՝ զուսլ առնլոյն ի շուրս, հարց ի դմանէ և տեսցուք, զի՞նչ կամի պատասխանել առ այն, այսինքն՝ զուսլն: Թէպէտ ոչ կամէր խեղճ ուրացողն վերստին արտաբերել զբան ինչ, սակայն յամենից կողմանց ստիպեցին, զի վասն իրողութեանս, եթէ ունիցի զբան ինչ վկայութեամբ սուրբ գրոց ասասցէ անտարակոյս:

Եւ իբրև ստիպեալ եղև ի թախանձանց, ասաց, թէ յոյժ ահագին և յայտնի վկայութիւն դնէ վասն մեղաբարիչ ջրոյս այսմիկ մարգարէն Եզէկիէլ ի գլուխն 36 և ի համարն 24. Թէ եւ առից զձեզ ի հեթանոսաց. և զկնի գրէ ասելով, թէ և ցանեցից ի վերայ ձեր ջուր սուրբ և սրբեշջիք յամենայն պղծութեանց ձերոց և յամենից կոոց ձերոց սրբեցից զձեզ և այլն: Արդ զհարգ ոչ կամիք դուք հնազանդիլ մարգարէութեանս յայսմիկ, զոր մարգարէն Եզէկիէլ բերանովն Աստուծոյ գուշակէ վասն ասպագայից ջրոցն սրբացուցչաց, զոր ի ձեռն մարգարէիս մեծի զկնի ժամանակաց հռչակել պարտ էր, զոր և հռչակեաց, չգիտեմ արդեօք, թէ զի՞նչ կամիք պատասխանել առ այսպիսի պարզագոյն վկայութեանս, ուրեմն և այլն:

Յայնժամն շուրջ հայելով մեր առ Մահմատ Հուսէյն Բեկ քալանթարն և առ բազմութիւնն ի մի հավաքելոցն, պատասխանեցաք մեղմաբար, թէ կամիմ, զի դուք ինքնին հարցանիցէք ի հանճարեղ վարդապէտս ձերմէ, թէ որպիսի՞ ջուր խոստանայ Աստուածն ի ձեռն Եզէկիէլի ցանել ի վերայ մարդկան, զի ջուրն այն լինիցի սուրբ, մինչ զի յորոց վերայ ցանիցի, տացէ զնոսա և սրբիլ յամենից պղծութեանց, իսկ եթէ ջուրն այն կարծէ գոլ ի ջրոյս յայսմանէ, զոր միշտ ըմպեմք և լուանիմք, որք են գտեք և աղբիւրք կամ ջրհորք ջուրց, ուրեմն պարտ էր ասել մարգարէին, թէ ասա, թէ առից զձեզ ի հեթանոսաց և ժողովեցից զձեզ ամենայն ազգաց և եթէ ցանեցից ի վերայ ձեր ջուր և ոչ ջուր սուրբ: Իսկ որովհետև ոչ ասէ սոսկ ջուր, զի կարծել կարասցուք, թէ ուրեմն է ջուրս այս զոր ըմպեմք և կամ լուանիմք, այլ ասէ զջուր սուրբ, ուրեմն այլ իմն ջուր պարտի լինիլ, զի իցէ սուրբ և տարբեր ի ջրոյս տարրականէ: Ո՞րն է ջուրն այն, ցույց մեզ զտեղին, յայնժամն և ես յօժարութեամբ դիմեմ առ ջուրն այն սուրբ, զի ցանիցի ի ձեռամբն Աստուծոյ ի վերայ իմ և հաւատամ սրբիլ յամենից պղծութեանց առանց տարակուսանց:

Յայնժամն ետես Միրզաթաղի աղայն իմ, թէ տաճկացեալցն համր կամին տալ լուծումն խնդրոյն իմոյ, ասաց առ իս, թէ դո՛ւ ասա ուրեմն, եթէ ջուրն այն ո՛չ է այս ջուրս, զորս մեք զղուսլ առնեմք, ո՞ր ջուրն իցէ ուրեմն այն, զոր մարգարէն հրամայէ և կամ դուր որպիսի՞ ջուր իմանայք զջուրն այն:

Իսկ ես մեծաւ հպատակութեամբ պատասխանեալ, ասացի, թէ ջուրն այն, զոր ի ձեռն մարգարէին Եզէկիէլի խոստանայ Աստուած վասն առ յապայիցն սրբութեանց, է ջուրն այն, զոր սկ[ի]զբն էառ բղխել ի քարոզութենէ Մեսիային մերոյ Քրիստոսի, այսինքն՝ է արտօսրս աշառ յելլոց, ի յապաշաւանաց և ի յամբոխմանէ սրտից մարդկանց, զոր ըստ պարսկաց զուսլի ըստրիսֆար կարեմք ասել, վասն զի մինչև զգալուստ և քարոզութիւնն Յիսիսուի Քրիստոսի ոչ ոք մարգարէ բացայայտեաց կամ ծանոյց և կամ կարաց շնորհն յայսիպսի ջուր մաքուր և սուրբ յելլոց ի յապաշաւանաց և ի կոծմանէ անցելոց մեղանացն, մինչ զի կարասցէ տալ մաքրել զմարդն ի պղծութեանց, որպէս և Եզէկիէլն գրէ: Վասն զի մինչև զգալուստ Մեսիային մերոյ ոչ ոք ի մարգարէիցն ծանեաւ զոգիամաքրիչ զօրութենէ ջրոյս ասպաշաւանացն արտօսրից, այլ զոր ինչ և մարգարէքն նախկինք խօսեցան բովանդակքն առ մաքրութիւն մարմնոց և հանդերձից և ոչ հոգևորացն ամենեկիմք:

Ուստի և միայն ազինք քրիստոնէիցս ճանաչեմք զայս ջուրս սուրբս և բազումք հանապազ զտիւ և զգիշեր լուանան զինքեանս այս սուրբ ջրովս և առնեն զղուալս, այսինքն՝ զմկրտութիւն, որպիսիք են միայնակեացք և անապատականք, նա և բազումք են, որք գոնեայ միանգամ և երկուանգամ ի շարաթւոջն անխափան լուանան զինքեանս այսու սուրբ ջրովս և ոմանք միանգամ կամ բազում անգամ ի յամսոջն կամ տարոջն ըստ իւրաքանչիւրոց շերտեռանդութեանցն, մեք զսա՛ և զջուրս զայս իմանամք գոլ ջուրն այն սուրբ և ոչ թէ իմն ջուր, յելեալ ի յերկրէ և ի աղբերաց քարավտակից, ուրեմն և այլն:

Յայնժամն աղայն իմ Միրզաթաղին կերպիւ իմն ա[պ]աշաւօրէն ասաց. Արդարև թուի ինձ, թէ կաթիլ մի արտասուք այնքան շնորհէ ումէք զմաքրութիւն, մինչ զի հազար լուացմունք գետոց ոչ բաւականացնն շնորհել այնքան մաքրութեանց թարց ապաշաւանաց, որպէս և ասէ Հաֆզն ևս թէ...

Եւ մինչդեռ բանն ոչ էր առեալ աւարտ, ասաց որդի Միրզաթաղին առ իս, այսինքն՝ Միրզա Մէհմադին, թէ ես այսպէս գիտեմ, որ զի եթէ օրինադրութիւնն Աւետարանին ոչ էր նուազեալ քան զօրինադրութիւն մարգարէիս մերոյ, ոչ գային այնքան քրիստոնեայք ի կրանս մեր, այլ պարտ էին ի կրօնիցն մերոյ դառնալ ի քրիստոնէութիւն, դոր այսքան ժամանակ ոչ տեսաք ամենևին, եթէ ոմն մահմետական փոփոխեալ իցէ ի կրօնս քրիստոնէութեանն, ուրեմն և այլն:

Իսկ ես պատասխանեալ ասացի. «Այդ է տղայական առարկութիւն և ոչ ունի այնքան զօրութիւն մինչ զի տացուք երկարել բանից: Ո՛վ ոք խելագար իցէ ի մահմետականացն, զի գայցէ ի միջի ձերում և ասասցէ, թէ ես խոտել կամիմ զայս և ընտրեցի քրիստոնէութիւնն և եղէ քրիստոնեայ, զոր ոչ կարծիցէք զնա թերևս: Այլ պարտ էր դալ և երշնակութիւն ձերում ընդ սպաճաւորութեամբ լինելով ծառայիւ ընդ տեառնդ, յայնժամ ցուցանէի տեառնդ իմոյ զանհամարս ի յուլամայիցն ձերոց ի Ֆոանկստանին զոր քրիստոնեայք եղեալ հանապազ գրեն ընդդէմ կրօնիցն իւրեանց նախնեաց»:

Յայսմ նուազում ևս համաձայնեալ ասաց Միրզաթաղի աղայն իմ, թէ արդարև ասէ Ստեփանն, վասն զի երեսուն տարի յառաջ քան զայս, մի՛նչ երթայի ի Հնդկս, մինչ հասաք ի Բանդար, ջահրումցի երիտասարդ մի ընդ մեզ նաւեցաք դէպի դայ և իբրև ժամանեցաք անդ, երիտասարդն այն ջահրումցի, իբրև ետես զեկեղեցիս և զկրօնս նոցին, առժամայն զնացեալ մկրտեցաւ և եղև քրիստոնեայ և երկար ամանակաւ մնալն նորին անդ, լուաք ի բազմաց, թէ ուսաւ ի դպրատունս նոցա և եղև այր երևելի և յապայն եղև կրօնաւոր և այլն:

Եւ իբր այս այսպէս եղև սկսաւ Միսէ Յիզալի ոմն վաճառական (զոր Միսէ Յզալի Ջուահիր մի անուանիւր, որ էր և նա ի ընկերաց Միրզային մեծի) ասել առ Միրզայն, թէ Միրզայ՛, եթէ ես ևս՝ ծառայ քոյ, երթայցեմ ի Ֆոանկըստուն և տեսանիցեմ զքնաղատիսլ և զգեղեցկատեսիլ, զխայտակըն և զվարդանկար կերպարան կանանց և աղջկանդն աշագեղից, զի՛նչ ասացից, թէ զհարդ և ես ոչ աճապարեցայց ասել, թէ և ես քրիստոնեայ եմ, սակայն սրտիւք իմով միշտ եմ մուսուլման և միշտ մուսուլման: Ո՛վ իցէ, որ ոչ ասիցէ զինքն դոլ քրիստոնեայ ի սէր այնքան շքնաղազարմիցն:

Եւ մինչդեռ այս բան ի բերանի ունէր Միրսէ Յզալին, առ ժամայն զխրախոյս բարձեալ ասացի առ բազմականսն, թէ արդարև որպէս և Միրսէ Յզալին իբրև շուէ ի Ֆոանկստան և վասն զեղեցկութեան կանանց քրիստոնէից և վասն վայելչութեանց կուսից կերպարանաց և սակս փափկութեանց աղցաւորաց բերանով խոստովան, թէ քրիստոնեայ եմ և սրտիւք

միշտ է մուսուլման և առաւել մուսուլման, նմանապէս և սոքայ, այսինքն՝ Մահտատ Յուսեյն Բեկն և Մահմատալիբեկն սակս գեղեցկութեանց կանանց պարսից Լաքաւողաց և սլարաւորաց և վասն փափկութեանց և վայելչութեանց փառաց և մեծութեանց աղցաւորաց և սոքայ թէպէտ բերանօքն իւրեանց արտաքուստ ասեն, թէ եմք օրինօքն մարդարէին ձերոյ, սակայն սրտիւքն իւրեանց են քրիստոնեայք և միշտ քրիստոնեայք:

Սւ առժամայն խնդրեալ զնորումն, ելի դուրս ստէպ, զի է յաւուր ճրագաւուցի յայտնութեան Տեառն և մերձ ի ժամանակ ժամակարգութեան և պատարագին հայոց, վասն որոյ աճապարեալ եղէ հասանիլ պատարագին:

Սւ եզերեցեաւ առարկութիւն վարդապետին և քալանթարին տաճկացելոյ և Քրիստոսի փառք: Ամէն:

Г. К. МИРЗОЯН—Культурно-историческое значение «бесед-дискуссий» Степаноса Даштеци. — Публикуя две из «бесед-дискуссий» известного поэта и публициста Степаноса Даштеци, сохранившихся в рукописи № 346 Матенадарана конгрегации св. Акопянц Иерусалима, автор находит их ценность не только в весомости затронутых вопросов и ответов, но и в важности как первоисточника по изучению истории армянской культуры. Одновременно, это произведение подтверждает тот факт, что на рубеже XVII—XVIII вв. купеческие дома и караван-сарай, где велись споры и беседы, являлись своего рода местом обмена мыслями и мнениями по животрепещущим вопросам, тем самым способствовали развитию общественного мышления.